

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ, ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՊՐՈՔԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Հովհաննես Բաղյանս, աշխատելով որպես ՀՀ արդարադատության նախարարության քրեական օրենսդրության, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչության փորձագետ, 2022 թվականի մայիսի 2-ից մինչև 2022 թվականի հուլիսի 7-ն ընկած ժամանակահատվածում կատարել եմ հետևյալ աշխատանքները.

➤ Մասնակցել եմ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական նոր օրենսգրքի նախագծի մշակման աշխատանքներին, որի շրջանակներում մասնակցել եմ մի շարք աշխատանքային քննարկումների:

➤ Մասնակցել եմ Պրոբացիայի ծառայության մեթոդական ուղեցույցների մշակման աշխատանքներին:

➤ Մասնակցել եմ «Պրոբացիայի մասին» օրենքում փոփոխությունների կատարման աշխատանքներին, ըստ անհրաժեշտությա ներկայացրել եմ առաջարկություններ:

➤ Ուսումնասիրել եմ միջազգային փորձ և ըստ այդմ՝ ներկայացրել եմ ամփոփ տեղեկանքներ և վերլուծություններ Պրոբացիայի ծառայությանն առնչվող տարբեր իրավական հարցերի և հիմնախնդիրների կապակցությամբ:

➤ Պատասխանել եմ քաղաքացիներից, հասարակական կազմակերպություններից, պետական մարմիններից, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից ստացված ընթացիկ գրություններին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՅԱՆ

07.07.2022թ.